

Թոխատյան Հրանտ Արամի



Ծնվել է 1958թ. հունվարի 10-ին Երևանում:

1976 –1981թթ. սովորել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում: Ավարտելուց հետո որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Օշական գյուղում, Հայաստան:

1976թ. հրավիրվել է Կամերային թատրոն, որտեղ և աշխատել է 15 տարի: 1991թ. Ռուբեն Ջաղինյանի և Կարեն Ղազարյանի հետ համատեղ հիմնադրել է «ՇԱԼՄ» ընկերությունը, որի տնօրենն է առ այսօր, 2010թ.-ից « Հայկական վեկտոր» մշակութային հիմնադրամի նախագահն է:

1995թ.-ից՝ «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի տնօրեն:

2010թ.-ից՝ «Հայկական վեկտոր» մշակութային հիմնադրամի նախագահ:

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

Ֆիլմագրություն

«Մեր պապերի քայլերգը» («Հայֆիլմ» կինոստուդիա– 1980թ.)

«Կամոյի մենախոսությունը» գեղարվեստական կինոնկար (Մոսկվա) (1987թ.)

«Մեր բակը» գեղարվեստական կինոնկար (1996թ.)

«Մեր բակը–2» գեղարվեստական կինոնկար (1997թ.)

«Ծովափնյա սիրավեպ» գեղարվեստական կինոնկար (Մոսկվա) (2000թ.)

«Քանի դեռ կամ» վավերագրական ֆիլմ (2000թ.)

«Մեր այբբենարանը» մանկական ուսուցողական ֆիլմաշար (2000–2006թ.թ.)

«Իմ մեծ հայկական հարսանիքը» գեղարվեստական կինոնկար («Մուսֆիլմ» կինոստուդիա) (2004թ.)

«Մեր բակը–3» գեղարվեստական կինոնկար (2005թ.)

«Մեծ պատմություն փոքր քաղաքում» գեղարվեստական կինոնկար (2006թ.)

«Տաքսի «Էլի լավ ա»» գեղարվեստական կինոնկար (2009թ.)

«Կորել և գտնվել է Հայաստանում» գեղարվեստական կինոնկար (2010թ.)

Թատերական ներկայացումներ

«Գայլը և յոթ ուլիկները, կամ մեկ անգամ ևս այծերի մասին» (1977թ.)

«Նազար, Նազար միչև վերջ» (1977թ.)

«Կառավարական համերգ» (1977թ.)

«Պարոնայք, ամեն ինչ կործանվում է, բայց դեռ կարելի է ապրել և զվարճանալ» (1978թ.)

«Երևանայան օրերի խրոնիկա» (1980թ.)

«Հիրոսիմա» (1983թ.)

«Համլետ» (1983թ.)

«Հայք» (1989թ.)

«Կաբարե» (1990թ.)

«Խաթաբալադա» (1996թ.)

«Mea Culpa- Իմ մեղքը» (2002թ.)

«Օպերա, օպերա» (2008թ.)

«Ժանգոտ բանալին» (2009թ.)

«Դոն Ժուան Ավիա» (2009թ.)

«Դոն Ժուանները Մարսելում» (2013թ.)

Մուլտֆիլմերի հնչյունավորում

«Տավերնա» (2008թ.)

«Անահիտ» (արտադրության մեջ է, Էկրանին կբարձրանա 2012թ.–ին)

Հեռուստահաղորդավարական գործունեություն

«100 տարբերակ» (2006թ.)

«Հայկական տարբերակ» (2006թ.)

«Բարի գիշեր, հայեր» (2010թ.–ից)

Հանդիսավարի գործունեություն

«Երևան-Մոսկվա. տրանզիտ», համերգ (2006թ., 2007թ.)

«Երևան-Կիև. տրանզիտ», համերգ (2009թ.)

«Հայաստան» համահայկական հիմնադրամ, հեռուստամարաթոն (ամեն տարի՝ սկսած 2004թ.–ից)

«Բանակի օրը», տոնական համերգ (2007թ., 2008թ., 2010թ.)

Հայկական հիմնադրամ օնկոլոգիական հիվանդությունների բուժման համար

Մասնակցությունը փառատոներին

Երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոն(1985թ.)

Միջազգային թատերական փառատոն (Նանտ, Ֆրանսիա) (1989թ.)

Պարգևներ

1985թ.՝ Երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոնի դափնեկիր

1989թ.՝ Հայաստանի Լենինյան կոմերիտության 1-ին մրցանակ

1989թ.՝ Le Theatre De Monde Միջազգային թատերական փառատոնի 2-րդ մրցանակ
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի պատվոգիր

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի պատվոգիր

2002թ.՝ Եգիպտոսի մանկական զվարճալի և ուսուցողական ֆիլմերի փառատոնի պատվավոր դիպլոմ

2006թ.՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչում

2008թ.՝ ՀՀ զինված ուժերի «Անդրանիկ Օզանյան» մեդալ՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից

2010թ.՝ ՀՀ զինված ուժերի «Վազգեն Սարգսյան» մեդալ՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից